



ԲԱՆԿԵՐՆ ԱՐՑԱԽԻՆ

23.04.2016



Որոշ բանկեր գրոյացրել են ապրիլի սկզբին ադրբեջանական ագրեսիան հետ մղելիս զոհված զինծառայողների և նրանց ընտանիքների վարկային պարտավորությունները: Հայաստանի բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյանն այդ հարցի հետ կապված հարցազրույց է տվել «Արմենիա» հեռուստաընկերության «Մուր անկյուն» ծրագրին:

Ներկայացնում ենք հարցազրույցի համառոտ բովանդակությունը:

1. Ադրբեջանի կողմից չորսօրյա պատերազմ սանձազերծելու պահից հարցը քննարկվել է ՀԲՄ-ի խորհրդի նիստում և բոլոր բանկերն իրենց պատրաստակամությունն են հայտնել ամեն տեսակի բանկային աջակցությունները ցուցաբերելու զոհված զինվորների, ազատամարտիկների և նրանց ընտանիքներին տրված վարկերի և դրանց տոկոսավճարների զիջման վերաբերյալ:
2. Որոշվել է օգնության ձևերի և չափերի մասին որոշումները թողնել առանձին բանկերի հայեցողությանը:
3. Օգնությունների տրամադրման միասնական մեխանիզմ որպես այդպիսին գոյություն չունի. որոշումները ընդունվում են բանկերի տնօրինությունների կողմից անհատական կարգով: Մասնավորապես, որոշ դեպքերում բանկերն են գտնում շահառուներին, մնացած դեպքերում իրենք հաճախորդներն են դիմում բանկ: Օգնության ձևերն են.

- Մենք ունենք օրինակներ, երբ բանկերը նույնիսկ ողջ-առողջ զինծառայողի, որը հիմա Արցախում է, ծնողներին ընդառաջելով, որոշում են ընդունել թեթևացնելու տրված վարկի պայմանները, այսինքն վարկը վերաձևակերպվում է, իջեցնելով տոկոսադրույքները, երկարացնելով ժամկետները և այլն:



- Բացի դա, շատ բանկեր, իմիջիայրոց, չուզեցանով, որ նշվի իրենց անվանումները, փոխանցում են միլիոնավոր դրամների միջոցներ Արցախի օգնության հիմնադրամին:
- Որոշ բանկեր զինադադար հաստատվելուն պես որոշում են կայացրել իրենց Ստեփանակերտի մասնաճյուղերի կողմից տրված բոլոր վարկերի տոկոսագումարների գանձումը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ:

Այսինքն օգնության տարբեր ձևեր կան, և բանկերը այդ առումով գործում են ըստ իրենց հայեցողության:



ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿԸ ՄԻԱՅԵԼ Է BEST ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

1.04.2016



AREXIMBANK
GAZPROMBANK GROUP

Առեկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբն ապրիլի 1-ից սկսել է իրականացնել առանց հաշվի բացման դրամական փոխանցումներ ռուսաստանյան BEST վճարային համակարգի միջոցով:

Բանկում նշել են, որ համակարգը հնարավորություն է տալիս իրականացնել ակնթարթային դրամական

փոխանցումներ Հայաստանի, ԱՊՀ երկրների միջև՝
դոլարով, եվրոյով և ռուբլիով:



«Համակարգը հաճախորդներին առաջարկում է
շահավետ սակագին, սկսած փոխանցվող գումարի
1%-ի չափով», - ասված է բանկի
հաղորդագրությունում:

**ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿՈՒՄ ԱՎԱՐՏՎԵԼ Է FASA-Ի «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՅԸ**

5.04.2016



ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ

Ամփոփվել է Գերմանահայկական
հիմնադրամի և գերմանական KfW
զարգացման բանկի կողմից
համատեղ իրականացվող
«Հայաստանում գյուղատնտեսության
ուղրտի ֆինանսավորում» (FASA) ծրագրի շրջանակում Հայբիզնեսբանկի
վարկային ստորաբաժանման աշխատակիցների համար անցկացվող
դասընթացներից մեկը՝ «Ֆինանսական վերլուծություն» թեմայով:

Բանկում նշել են, որ գյուղատնտեսական վարկավորման գործընթացի
արդյունավետության բարձրացման համար անցկացվող դասընթացը մշակվել
է Business and Finance Consulting (BFC) ընկերության կողմից՝ հատուկ
Հայբիզնեսբանկի համար:

Ֆինանսական հմտությունների զարգացմանն ուղղված 5-օրյա դասընթացի
ավարտին BFC-ի գյուղատնտեսական և բիզնես վարկավորման գծով
փորձագետ Այոնա Բեվգյուկը թեսթավորման միջոցով ստուգել է
Հայբիզնեսբանկի աշխատակիցների կողմից գիտելիքների ու փորձի
յուրացումը և նրանց հանձնել դասընթացի մասնակցության հավաստագրերը:

Բանկում տեղեկացրել են, որ FASA ծրագրի շրջանակում Հայբիզնեսբանկի
վարկային ստորաբաժանման աշխատակիցների համար անցկացվող
դասընթացները շարունակվելու են մինչև տարեվերջ, որի ընթացքում բանկի
աշխատակիցները կմասնակցեն նաև գյուղատնտեսական վարկավորման,

փոքր բիզնեսի վարկավորման, որակավորման բարձրացման (ռիսկեր), որակի կառավարման համակարգի վերաբերյալ դասընթացների:

ՀՀ ԲԱՆԿԵՐԸ ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ

12.04.2016

Banks.am կայքը, հիմնվելով Մեդիամաքս մեդիա ընկերության մշակած MaxMonitor մեդիա մոնիտորինգի համակարգի տվյալների վրա, այսուհետ եռամսյակը մեկ կներկայացնի «ՀՀ բանկերը ՁԼՄ-ներում» համառոտ հաշվետվությունը:

Այսպես, 2016թ. առաջին եռամսյակի արդյունքներով՝ ՁԼՄ-ներում (լրատվական կայքեր, թերթեր և հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումներ) ունեցած հիշատակումների թվով առաջատար են հետևյալ բանկերը՝ ՎՏԲ-Հայաստան Բանկ (225), Ամերիաբանկ (193) և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ (174):

Կայքերում և թերթերում հիշատակումների թվով առաջատարը ևս ՎՏԲ-Հայաստան Բանկն է՝ 180 հիշատակում կայքերում և 40՝ թերթերում: Հեռուստատեսությամբ առաջատար է Ամերիաբանկը՝ 21 հեռուստառեպորտաժ:

Ամերիաբանկը առաջատար է նաև դրական հիշատակումների թվով: Երկրորդն այս ցուցանիշով Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկն է, երրորդը՝ ՎՏԲ-Հայաստան Բանկը:

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է \$5 ՄԼՆ-Ի ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

14.04.2016



Յունիբանկը հայտարարել է 8% տարեկան եկամտաբերությամբ դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման մասին:

Ինչպես նշել են բանկում, թողարկման ծավալը կազմում է \$5 մլն, որը ներառում է 50 հազ. պարտատոմս՝ յուրաքանչյուրը \$100

անվանական արժեքով:

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը կազմում է 24 ամիս, իսկ արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է եռամսյակային պարբերականությամբ:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է ընթացիկ տարվա ապրիլի 8-ից հունիսի 14-ը, իսկ մարումը՝ 2018թ. ապրիլի 8-ին:

Նախատեսված է, որ տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը կցուցակվեն «ՆԱՄԴԱՔ ՕԷՍԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում:



ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ՈՍԿՈՒ ԳՐԱՎՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22.04.2016



Յունիբանկը վերանայել է ոսկու գրավով տրամադրվող վարկերի պայմանները՝ դարձնելով դրանք առավել մատչելի հաճախորդների համար:

Վարկի առավելագույն գումարը կազմում է 1 000 000 ՀՀ դրամ կամ 2 000 ԱՄՆ դոլար, ժամկետը՝ մինչև 24 ամիս, տարեկան տոկոսադրույքը՝ ՀՀ դրամի դեպքում՝ սկսած 22%-ից, իսկ ԱՄՆ դոլարի

դեպքում՝ 16%-ից: Գրավի գնահատման միջնորդավճար չկա:

«U-Gold» վարկը կարելի է ձևակերպել Յունիբանկի 11 մասնաճյուղերում:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է 50% ԶԵՂՉ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՀԱՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

25.04.2016

**ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՆԿ**



Զարգացման Հայկական Բանկի «Էրեբունի» և «Մալաթիա» մասնաճյուղերում ապրիլի 7-ից հուլիսի 7-ը գործում է 50% զեղչ անհատական պահատեղերի վարձակալության համար:

Բանկում նշել են, որ ակցիայի նպատակն է քաղաքացիներին հնարավորություն տալ պահել թանկարժեք իրերն ապահով վայրում մատչելի պայմաններով՝ առանց մտահոգվելու դրանց անվտանգության մասին:

Ծառայությունից կարող են օգտվել թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձ հաճախորդները, ինչպես նաև այն անձինք, որոնք դեռևս բանկի հաճախորդ չեն:

«Զարգացման Բանկի անհատական չիրկիզվող պահատեղերը համապատասխանում են պաշտպանության միջազգային չափանիշներին, պաշտպանվում են ժամանակակից սարքավորումներով և բանկի անվտանգության ծառայության մշտական հսկողության տակ են», - նշվում է հաղորդագրությունում: Բանկն ապահովում է պահատեղերի պարունակության բացարձակ գաղտնիությունը:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ԲԱՐԵԼԱՎԵԼ Է «ՍՈՒՊԵՐՄԱՐԵԿԵՏ»
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

26.04.2016



ՎՏԲ-Հայաստան Բանկը բարեխիղճ վարկառուների համար բարելավել է ապառիկի վարկավորման պայմանները:

Բանկում նշել են, որ վարկառուն, միանալով «Սուպերմարեթ» ծառայությանը և բարեխիղճորեն սպասարկելով ապառիկն առնվազն 6 ամիս, ամբողջական մարումից հետո կստանա պարգևավճար՝ տրամադրված վարկի մայր գումարի մինչև 20%-ի չափով:

«Սուպերմարեթ» ծառայության շրջանակում ՎՏԲ-Հայաստան Բանկը 3 հազ-ից ավելի վարկառուի վերադարձրել է շուրջ 10 մլն դրամ:

ԿԲ-Ն ՀԱՍՏԱՏԵԼ Է ԻՆԵՎՈՒՄԱՆԿԻ ԵՎ ՊՐՈԿՐԵԴԻՏ ԲԱՆԿԻ ՄԻԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

28.04.2016



ՀՀ Կենտրոնական բանկն ապրիլի 26-ին հաստատել է «Ինեկոբանկ» ՓԲԸ և «Պրոկրեդիտ Բանկ» ՓԲԸ ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը:

Երկու բանկերի միացման գործընթացը սկսվել էր 2015թ. դեկտեմբերից՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ կողմից «Պրոկրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի՝ «Պրոկրեդիտ» միջազգային հոլդինգին պատկանող բաժնետոմսերի 100%-ը ձեռք բերելու մասին երկկողմ համաձայնագրի ստորագրմամբ:

ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿԸ ՆԵՐԴՐԵԼ Է SMS ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ՀԱՄԱԿԱՐԳ
28.04.2016

Պրոմեթեյ Բանկը ներդրել է հաճախորդների SMS հիշեցումների անվճար համակարգ, որը գործում է մայիսի 1-ից:



Բանկում նշել են, որ այս համակարգի ներդրման նպատակը հաճախորդների սպասարկման որակի և հարմարավետության բարձրացումն է:

«Բանկի հաճախորդները՝ վարկառուները, ավանդատուներն ու քարտապանները, իրենց վարկերի և օվերդրաֆտների հետագա մարումների, ինչպես նաև ավանդային պայմանագրի ժամկետների լրանալու մասին հավելյալ կտեղեկացվեն SMS հիշեցումների միջոցով», - ասված է հաղորդագրությունում:



ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ 5-ՐԴ ՏԱՐԻՆ ՃԱՆԱԶՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱԱԿՏԻՎ ԹՈՂԱՐԿՈՂ ԲԱՆԿԸ

11.05.2016



Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) կողմից Արարատբանկ ԲԲԸ-ն Միջազգային առևտրի խթանման ծրագրի (TFP) շրջանակում ճանաչվել է “2015թ.-ի ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում”: Լոնդոնում ՎՋԵԲ-ի հերթական տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ մրցանակը ՎՋԵԲ-ի ֆինանսական հաստատությունների գծով գործադիր տնօրեն Նիք Թեսեյմանը հանձնել է Արարատբանկ ԲԲԸ-ի պատվիրակությանը, որը գլխավորել է բանկի վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը: Նշենք, որ “TFP Award” պատվավոր մրցանակին բանկն արժանանում է 5-րդ անգամ:

Աշոտ Օսիպյանը, կարևորելով ՎՋԵԲ-ի հետ երկարաժամկետ համագործակցությունը, նշել է, որ բանկային ծառայությունների շուկայի

բարձր մրցակցության պայմաններում նման ձեռքբերումը վկայում է, որ բանկը զարգանում է ճիշտ ուղղությամբ, և բանկի մատուցած ծառայությունները համապատասխանում են նաև համաշխարհային բարձր վարկանիշ ունեցող ՎՋԵԲ-ի պահանջներին:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՎՋԵԲ-Ի ԱՌԵՎՏՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ «ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐՔ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑԱՆԱԿԻՆ
11.05.2016



2016թ.-ի մայիսի 10-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎՋԵԲ) Կոնվերս Բանկին շնորհեց «Տարվա գործարք՝ սոցիալական ներգործություն» մրցանակը՝ «GE Healthcare» նոր սերնդի բարձրակարգ բժշկական սարքավորումներով «Իզմիրյան» բժշկական կենտրոնի ամբողջական

տեխնիկական վերազինմանն աջակցելու համար:

Լոնդոնում՝ ՎՋԵԲ-ի Տարեկան ժողովի և բիզնես ֆորումի ժամանակ, մրցանակը հանձնվեց Կոնվերս Բանկի գործադիր տնօրեն Տիգրան Դավթյանին և Միջազգային հարաբերությունների և առևտրի ֆինանսավորման բաժնի պետ Իննեսա Ամիրբեկյանին: Առևտրի աջակցման ծրագրի մրցանակաբաշխության պատմության մեջ առաջին անգամ մրցանակը շնորհվել է «Սոցիալական ներգործություն» անվանակարգում՝ գործարքը ճանաչելով բացառիկ ոչ միայն իր յուրահատուկ ֆինանսական կառուցվածքով, այլ նաև երկրի առողջապահության ոլորտի զարգացման գործում իր սոցիալական նշանակությամբ:

Գործարքի իրականացման համար Կոնվերս Բանկի կողմից թողարկվել էր 3,7 մլն. ԱՄՆ դոլարի ակրեդիտիվ՝ համաշխարհային առողջապահության ոլորտում տրանսֆորմացիոն բժշկական տեխնոլոգիաների և լուծումների առաջատար մատակարար «General Electric Medical Systems» ընկերությունից նորարարական բժշկական սարքավորումները առաջին անգամ Հայաստան ներկրելու համար: Ակրեդիտիվը հաստատվել է բելգիական KBC Բանկի

կողմից և ապահովվել ՎՋԵԲ-ի՝ կոմերցիոն և քաղաքական հնարավոր ռիսկերը ծածկող 100% երաշխիքով:

«Սա կրկնակի նվաճում է մեզ համար: Առաջին հերթին, մենք չափազանց հպարտ ենք լինել բանկ, որն օգնել է իրականացնել նման սոցիալական կարևորության ծրագիր. ծրագիր, որն ազդարարում է Հայաստանում լիովին նոր բարձրորակ բժշկական ծառայությունների և լուծումների դարաշրջան: Եվ երկրորդ, հանդիսանալով ՎՋԵԲ-ի երկար տարիների գործընկերը, մեզ համար պատիվ է ստանալ այս կարևոր մրցանակը, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ մրցանակը շնորհվել է «Սոցիալական ներգործություն» անվանակարգում առաջին անգամ», - ասաց Տիգրան Դավթյանը:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ ՄՐՑԱՆԱԿ Է ՍՏԱՑԵԼ ՎՋԵԲ-ԻՑ

11.05.2016



Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ) Ամերիաբանկին շնորհել է «Տարվա գործարք՝ էներգաարդյունավետություն» մրցանակը (Deal of the Year – Energy Efficiency)՝ 2015թ-ին Հայաստանում ջերմոցային ենթակառուցվածքի էներգաարդյունավետության բարելավման համար:

Ամերիաբանկն «Ալտերնատիվ էներգիա» ՄՊԸ-ի համար թողարկել է երկու ակրեդիտիվ, որը հաստատվել և ֆինանսավորվել է Կոմերցբանկի կողմից՝ ՎՋԵԲ-ի երաշխավորությամբ: Նիդերլանդների զարգացման բանկը (FMO) նույնպես մասնակից է եղել այս գործարքին՝ ծածկելով քաղաքական և վճարման ռիսկերի որոշակի մասը: Նախագծի ամբողջ արժեքը կազմել է \$2,3 մլն, որից \$1,91 մլն-ի ֆինանսավորումն իրականացվել է Ամերիաբանկի կողմից թողարկված ակրեդիտիվների միջոցով:

Ստացված ֆինանսավորման շնորհիվ «Ալտերնատիվ էներգիա» ընկերությունը Չեխիայից ձեռք է բերել էներգախնայող բարձրակարգ սարքավորումներ, որոնք հնարավորություն են ընձեռում մեկ տարվա

ընթացքում տնտեսելու 390,000 ԱՄՆ դոլարի էներգիա սովորական սարքավորումներով աշխատող ջերմոցային ընկերությունների համեմատությամբ, ինչպես նաև կրճատելու բնական գազի օգտագործումը 1,950,000 մ³-ի չափով:



ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ \$10 ՄԼՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ Է ՆԵՐԳՐԱՎԵԼ
12.05.2016



Հայէկոնոմբանկը \$10 մլն արժողությամբ վարկային պայմանագիր է կնքել շվեյցարական Symbiotics և լյուքսեմբուրգյան Micro, Small & Medium Enterprises Bonds ֆինանսական հաստատությունների հետ:

Ինչպես նշել են բանկում, Հայէկոնոմբանկի ներգրաված վարկային միջոցներն ուղղվելու են Հայաստանում միկրո, փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորմանն ու զարգացմանը:



FITCH-Ն ԱՍԵՐԻԱԲԱՆԿԻՆ ՇՆՈՐՀԵԼ Է «B ՊԼՅՈՒՍ» ՎԱՐԿԱՆԻՇ ԿԱՅՈՒՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ

12.05.2016



Fitch միջազգային վարկանշային կազմակերպությունը վերահաստատել է Ամերիաբանկին շնորհած արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի «B պլյուս» վարկանիշը՝ սահմանելով Կայուն հեռանկար մեկ տարի առաջ շնորհած Բացասական հեռանկարի (Long-term Issuer Default Rating (IDR))

փոխարեն:

«Նման վարկանիշի վերահաստատումը խոսում է բանկի ընդունելի ֆինանսական ցուցանիշների, իրացվելիության զգալի պաշարի, վերաֆինանսավորման կառավարելի ռիսկերի և բարձր հեղինակության մասին: Fitch-ը կարևորել է այն հանգամանքը, որ չնայած ՀՀ բանկային համակարգում առկա բարձր մրցակցությանը, Ամերիաբանկը գրավել է հաստատուն դիրքեր շուկայում՝ պահպանելով առաջատարի դիրքը վարկավորման ոլորտում (մասնաբաժինը շուկայում՝ 14,8%), առևտրի ֆինանսավորման և հաճախորդների նկատմամբ ունեցած պարտավորությունների գծով (մասնաբաժինը շուկայում՝ 15%)»,- նշված է Ամերիաբանկի տարածած հաղորդագրությունում:



ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ ՀԱՄԱԼՐԵԼ Է ԻՐ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

13.05.2016



ՀՀ բանկային համակարգում մեկնարկած կապիտալի համալրման գործընթացի արդյունքում «Մելլաթ Բանկ» ՓԲԸ-ն հերթական փուլով համալրել է իր կանոնադրական կապիտալը՝ հասցնելով այն 23.1 մլրդ դրամի:

«Բանկային ոլորտում ներկայումս ընթացող բանկերի խոշորացման գործընթացների ֆոնին նման քայլը կրում է ոչ միայն առաջադիմական բնույթ, այլև ավելի է ամրապնդում բանկային համակարգում Մելլաթ Բանկի հետագա առաջխաղացումը:

Արդեն 20 տարուց ավել հայաստանյան բանկային համակարգում իր գործունեությունը ծավալող Մելլաթ Բանկը, տարիներ շարունակ գտնվելով միջազգային պատժամիջոցների ներքո, ոչ միայն չի դադարեցրել իր գործունեությունը, այլև շարունակում է մատուցել ֆինանսական ծառայություններ և իրականացնել գործառնություններ՝ հետագայում ընդլայնելով դրանց քանակն ու ուղղվածությունը:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ \$20 ՄԼՆ Է ՆԵՐԳՐԱՎԵԼ DEG ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

13.05.2016



Ամերիաբանկը DEG ներդրումային ընկերությունից ներգրավել է \$20 մլն վարկ՝ 6 տարի մարման ժամկետով:

Ինչպես նշել են բանկում, վարկն ուղղվելու է Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և էներգախնայող ընկերությունների ֆինանսավորմանը:

Համապատասխան պայմանագիրը ստորագրվել է նախօրեին Լոնդոնում՝ Ամերիաբանկի տնօրինության նախագահ, գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի, DEG Եվրոպայի և Ասիայի ֆինանսական կազմակերպությունների գծով տնօրեն Ռենա Թերֆրակտի և Եվրոպայի և Ասիայի ֆինանսական կազմակերպությունների գծով ավագ ներդրումային կառավարիչ Ջուլիան Լոքի միջև:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,

- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: